## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> ------------հունիսի------------2025թ. N ՄՈ/574-Ա

ք. Արմավիր

**«ԵՂԵԳՆՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի մայիսի 30-ի N01/11.1/04155-2025 գրությունը և «Եղեգնուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի հունիսի 2-ի N40 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը, աշխատանքային կարգապահությունը խախտելու համար.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Եղեգնուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովհաննես Մարգարյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-06-12 12:57:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆՑ-ի կողմից